ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

2011 թ. մայիսի 27 -ի
թիվ 5/1667/ ՀՀ ԳԱԱ նախագահության
որոշմամբ

ԿԱՐԳ

ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրության

ՀՀ ԳԱԱ-ի նախագահի ընտրությունները իրականացվում են ՀՀ ԳԱԱ Կանոնադրության 61-րդ կետի հիման վրա ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի կողմից, որին վճռական ձայնի իրավունքով մասնակցում են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսները, թղթակից անդամները և ՀՀ ԳԱԱ համակարգի կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչները (ՀՀ ԳԱԱ Կանոնադրության 46-րդ կետ)։ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան և պատվավոր անդամները և ՀՀ ԳԱԱ-ի համակարգի կազմակերպությունների տնօրենները, որոնք չեն հանդիսանում կազմակերպությունների լիազոր ներկայացուցիչներ, կարող են մասնակցել ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով (ՀՀ ԳԱԱ Կանոնադրության 47-րդ կետ)։

ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե ժողովին ներկա է անդամների առնվազն երկու երրորդը (ՀՀ ԳԱԱ կանոնադրության 49-րդ կետ)։

ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությունները ընթանում են հետևյալ ընթացակարգով։

1. ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությանը նվիրված ընդհանուր ժողովի անցկացման ժամկետը որոշում է ՀՀ ԳԱԱ նախագահությունը ոչ ուշ, քան ընտրություններից մեկ ամիս առաջ։

2. ՀՀ ԳԱԱ նախագահը ընտրվում է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներից ՀՀ ԳԱԱ Ընդհանուր ժողովի կողմից առաջադրված թեկնածուներից (ՀՀ ԳԱԱ կանոնադրության 61-րդ կետ)։

3. ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությունները կատարվում են փակ քվեարկությամբ։ Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է

առավելագույն թվով ձայներ, բայց ոչ պակաս, քան ընտրությանը մասնակցողների ձայների պարզ մեծամասնությունը:

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրված մեկից ավելի թեկնածուների դեպքում ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի մասնակիցները պետք է քվեարկեն միայն մեկ թեկնածուի օգտին:

4. Եթե առաջադրված է մեկ թեկնածություն, ապա անց է կացվում քվեարկության մեկ փուլ:

Եթե առաաջադրված են մեկից ավելի թեկնածուներ և առաջին փուլում թեկնածուներից և ոչ մեկը չի ընտրվում, ապա անց է կացվում քվեարկության երկրորդ փուլը, որում քվեաթերթիկի մեջ ընդգրկվում է առավելագույն ձայներ (բայց ոչ պակաս, քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը) ստացած թեկնածուն: Եթե քվեարկության երկրորդ փուլում այդ թեկնածուն չի ընտրվում, ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշմամբ նշանակվում է նոր ընտրություններ անցկացնելու ժամկետը:

Եթե առաջին փուլում երկու կամ ավելի թեկնածուներ ստացել են առավելագույն հավասար ձայներ (բայց ոչ պակաս, քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը), ապա երկրորդ փուլի քվեաթերթիկի մեջ ընդգրկվում են բոլոր այդ թեկնածուները: Եթե երկրորդ փուլում այդ թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում, ապա անց է կացվում քվեարկության երրորդ փուլը:

Քվեարկության երրորդ փուլին մասնակցում է միայն այն թեկնածուն, որը քվեարկության երկրորդ փուլում ստացել է ձայների առավելագույն քանակը (բայց ոչ պակաս քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը), կամ առավելագույն (բայց ոչ պակաս քան ձայների ընդհանուր թվի մեկ քառորդը) հավասար ձայներ ստացած բոլոր թեկնածուները:

5. Եթե թեկնածուն (թեկնածուները) քվեարկության երրորդ փուլում չի (չեն) հավաքում ձայների անհրաժեշտ քանակը, ապա ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովի որոշմամբ նշանակվում է նոր ընտրություններ անցկացնելու ժամկետը (մեկ ամսվա ընթացքում):

6. ՀՀ ԳԱԱ-ի փոխնախագահի և ակադեմիկոս քարտուղարի ընտրությունները կատարվում են ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովում ՀՀ ԳԱԱ նախագահի առաջադրմամբ, ՀՀ Կանոնադրության 63-րդ կետի համաձայն: